Նոր Տարվա Երազանքներ

Թող այս Ամանորը մի քիչ տարբերվի.

Այս Ամանորին ու Սուրբ Ծնունդին մենք փորձեցինք տարբեր երազանքներ իրականացնել. երազանքներ, որոնք ստացել էինք Հայաստանի տարբեր ծայրերում ապրող մեր քաղաքացիներից: Բոլոր երազանքները ունեին փոքրիկ բյուջե, բայց շատ կարեւոր եւ մեծ ազդեցություն:

Երազանքների ամանորյա արկղը բացեցինք դեկտեմբերի սկզբին եւ մինչ հունվարի 6-ը հատ առ հատ նրանք ձեզ ներկայացրեցինք ըստ հերթականության: Ամեն մի հաջորդ ցանկությունը իրագործելու համար, պետք էր նախաառաջ ֆինանսավորել առաջինը:

Բոլոր գաղափարները շատ լավն էին եւ մեր երազանքն էր, որ բոլորը հասցնենք իրականացնել, ձեր շնորհիվ այդպես էլ ստացվեց, եւ մի բան էլ ավելին, քանի որ բավականաչափ նվիրատվություններ էինք ստացել, հավելյալ գումարով կարողացանք իրականացնել նաեւ 14-րդ բոնուսային երազանքը՝ Սիսիանում բնակվող եւս մի Արցախից տարհանված ընտանիքի համար: Շատ շուտով ձեզ կներկայացնենք բոլոր երազանքների իրականացման արդյունքները: Շնորհակալություն մեր սիրելի բարերարներ մեզ աջակցելու համար: Առանց ձեզ այս ամենը հնարավոր չէր լինի իրագործել:

#13) Սուրբ Ծննդի տասներեքերորդ օրը

Մեր հովանավորների շնորհիվ ...
Սիսիանում բնակություն հաստատած Գրիգորյանների ընտանիքի համար գնեցինք վառարան և շուտով կվերանորոգենք տան տանիքը:

44-օրյա պատերազմից հետո բազմաթիվ ընտանիքներ բռնի կերպով տեղահանվել են իրենց հողերից: Կորցնելով իրենց ունեցվածքի մեծ մասը՝ նրանք ամեն ինչ անում են, որպեսզի իրենց փոքր ունեցվածքով հաստատվեն այստեղ: Այս ողբերգական իրավիճակը մեղմելու համար՝ Հայ Օգնության Ֆոնդը աջակցություն է տրամադրում Սիսիանում բնակություն հաստատած ընտանիքներին: Գրիգորյանների ընտանիքը (հայր, մայր ու 4 երեխա) մեկն են այդ ընտանիքներից: Շուշան Գրիգորյանը ապրում է Սիսիանում մի բնակարանում իր չորս երեխաների հետ, իսկ ամուսինն աշխատում է Ստեփանակերտում: Իրենց տան տանիքը ուներ մեծ վերանորոգման կարիք: Ձեր օգնությամբ մենք կվերանորոգենք իրենց տան տանիքը շուտով եւ կգնենք վառարան: Շնորհակալություն:

Ընդհանուր հավաքված գումար՝ ֏ 460,000

#12) Սուրբ Ծննդի տասներկուերորդ օրը

Մեր հովանավորների շնորհիվ...
Սիսիանում բնակություն հաստատած Նոյեմզարների ընտանիքի համար գնեցինք մանկական մահճակալ, ութ վերմակ, ութ ներքնակ եւ տասնվեց հատ սպիտակեղեն:

44-օրյա պատերազմից հետո բազմաթիվ ընտանիքներ բռնի կերպով տեղահանվել են իրենց հողերից: Կորցնելով իրենց ունեցվածքի մեծ մասը՝ նրանք ամեն ինչ անում են, որպեսզի իրենց փոքր ունեցվածքով հաստատվեն այստեղ: Այս ողբերգական իրավիճակը մեղմելու համար՝ Հայ Օգնության Ֆոնդը աջակցություն է տրամադրում Սիսիանում բնակություն հաստատած ընտանիքներին: Նոյեմզարների ընտանիքը (հայր, մայր ու 6 երեխա) մեկն են այդ ընտանիքներից: Նրանք արդեն ունեին օթևան, բայց նաև կարիք էին զգում տնային հիմնական իրերի: Դուք տրամադրեցիք նրանց ամենաանհրաժեշտ իրերը՝ մանկական մահճակալ, 8 վերմակ, 8 ներքնակ եւ 16 սպիտակեղեն: Շնորհակալություն:

Ընդհանուր հավաքված գումար՝ ֏ 614,000

#11) Սուրբ Ծննդի տասնմեկերորդ օրը

Մեր հովանավորների շնորհիվ...
Սիսիանում բնակություն հաստատած Մնացականյանների ընտանիքի համար գնեցինք չորս մահճակալ եւ լվացքի մեքենա:

44-օրյա պատերազմից հետո բազմաթիվ ընտանիքներ բռնի կերպով տեղահանվել են իրենց հողերից: Կորցնելով իրենց ունեցվածքի մեծ

մասը՝ նրանք ամեն ինչ անում են, որպեսզի իրենց փոքր ունեցվածքով հաստատվեն այստեղ: Այս ողբերգական իրավիճակը մեղմելու համար՝ Հայ Օգնության Ֆոնդը Սիսիանում, սահմանի մոտ, գնել է նոր տներ մի քանի մեծ ընտանիքների համար: Մնացականյանները (հայր, մայր ու 4 երեխա) մեկն են այդ ընտանիքներից: Նրանք արդեն ունեին օթևան, բայց նաև կարիք էին զգում տնային հիմնական իրերի: Դուք նրանց տրամադրեցիք ամենաանհրաժեշտ իրերը՝ 4 մահճակալ և լվացքի մեքենա: Շնորհակալություն:

Ընդհանուր հավաքված գումար՝ ֏ 440,000

#10) Սուրբ Ծննդի տասերորդ օրը

Մեր հովանավորների շնորհիվ...
Սիսիանում բնակություն հաստատած Հայրապետյանների ընտանիքի համար գնեցինք ութ մահճակալ եւ սառնարան:

44-օրյա պատերազմից հետո բազմաթիվ ընտանիքներ բռնի կերպով տեղահանվել են իրենց հողերից: Կորցնելով իրենց ունեցվածքի մեծ մասը՝ նրանք ամեն ինչ անում են, որպեսզի իրենց փոքր ունեցվածքով հաստատվեն այստեղ: Այս ողբերգական իրավիճակը մեղմելու համար՝ Հայ Օգնության Ֆոնդը Սիսիանում, սահմանի մոտ, գնել է նոր տներ մի քանի մեծ ընտանիքների համար: Հայրապետյանները (հայր, մայր, հորեղբայր ու 8 երեխա) մեկն են այդ ընտանիքներից: Նրանք արդեն ունեին օթևան, բայց նաև կարիք էին զգում տնային հիմնական իրերի: Դուք նրանց տրամադրեցիք 8 մահճակալ և սառնարան: Շնորհակալություն:

Ընդհանուր հավաքված գումար՝ ֏ 630,000

#9) Սուրբ Ծննդի իններորդ օրը

Մեր հովանավորների շնորհիվ...
Բազմաթիվ նվերներ ուղարկեցինք շուրջ 251 Արցախում բնակվող երեխաների համար:

Արցախի Մարտունու շրջանում բնակվում է 251 երեխա: Նրանցից ոմանք տեղահանվել են այլ շրջաններից, որոնք մենք կորցրել ենք անցյալ տարվա 44-օրյա պատերազմի ժամանակ: Ոմանք կորցրել են իրենց հայրերին: Բայց բոլորն էլ պայծառ են, համարձակ ու խելացի: Նրանք լավատես են իրենց ապագայի նկատմամբ և հավատում էին, որ Ձմեռ պապը կհիշի իրենց այս տարի: Երեխաները իրենց նամակներն ուղղել էին Հյուսիսային բևեռին և սպասում էին հրաշքների: Դուք դարձաք Ձմեռ պապ այս երեխաների համար: Շնորհակալություն:

Ընդհանուր հավաքված գումար՝ ֏ 878,500

#8) Սուրբ Ծննդի ութերորդ օրը

Մեր հովանավորների շնորհիվ...
Արաբկիր բժշկական կենտրոնում ամանորին բուժվող շուրջ 120 երեխաներին անակնկալ նվերներ ուղարկեցինք:

Այս տարի 100-ից ավել երեխա որ տարի ն դիմավորեց «Արաբկիր» բժշկական կենտրոնում, այլ ոչ թե տանը՝ ընտանիքի հետ. Բուժհաստատությունը սպասարկում է մարդկանց Հայաստանի բոլոր մարզերից, որոնցից շատերը խնամքի համար տնից բավականին հեռանում են: Այս տարի մի խումբ կամավորներ ցանկանում էին հրավիրել Ձմեռ պապիկին՝ Ամանորի գիշերը երեխաներին անակնկալ մատուցելու: Բայց նրանք չէին կարողանում ֆինանսավորում գտնել նվերների համար: Դուք դարձաք Ձմեռ պապի օգնականներ այս տարի՝ այդ բոլոր երեխաների համար նվերներ առնելով: Շնորհակալություն:

Ընդհանուր հավաքված գումար՝ ֏ 750,000

#7) Սուրբ Ծննդի յոթերորդ օրը

Մեր հովանավորների շնորհիվ...
Գյումրու հաշմանդամություն ունեցող 36 երեխաների համար ամանորյա խնջույք կազմակերպեցինք:

Մարիամն ունի վառ աչքեր և ծանր ուղեղային կաթված: Նա իր ընտանիքի վեց անդամների հետ ապրում է Գյումրիի տնակներից մեկում: Ամեն անգամ, երբ իրենց տուն հյուրեր են գալիս, նա ամուր բռնում է նրանց ձեռքերը և ասում «մնա»: Մարդկանաց հետ շփվելու նրա ցանկությունը մեծ է. Ցավոք, քայլել չկարողանալու պատճառով, նա իր ժամանակի մեծ մասն անցկացնում է տանը: Բայց կան երկու իրադարձություններ, որոնց նա սպասում է ամեն տարի՝ ամառային ճամբարը և ամանորյա խնջույքը: Անցյալ տարի համաճարակի և պատերազմի պատճառով երկու միջոցառումներն էլ չեղարկվեցին: Այս տարի ձեր օգնությամբ մենք իրականացրեցինք Մարիամի Սուրբ Ծննդյան երազանքը: Ձեր շնորհիվ, իրենք խնջույք կազմակերպեցին հաշմանդամություն ունեցող 36 երեխաների և երիտասարդների համար և իրենց ընտանիքի անդամների համար: Երեխաները նաեւ նվերներներ ստացան: Շնորհակալություն մեզ օգնելու եւ Մարիամի երազանքը իրականացնելու համար:

Ընդհանուր հավաքված գումար՝ ֏ 445,000

#6) Սուրբ Ծննդի վեցերորդ օրը

Մեր հովանավորների շնորհիվ...
Վանաձորի տարեցների տան 55 բնակիչներին տաք հագուստ նվիրեցինք եւ ուրախ ամանոր կազմակերպեցինք:

Վանաձորի տարեցների տունը այս պահին հյուրընկալում է ցածր

եկամուտ ունեցող 55 տատիկ և պապիկի: Տարեցների տանը նրանց հասանելի է անվճար բժշկական օգնություն, առողջ և տաք սնունդ և իրենց հասակակիցների հետ շփման հնարավորություն: Բնակիչներից շատերը չունեն ընտանիք և հարազատներ, համենայն դեպս Հայաստանում բնակվող: Սուրբ Ծննդին և Ամանորին տարեցների համար սովորաբար կազմակերպվում է համեստ ընթրիք, սահմանափակ ֆինանսական միջոցների պատճառով: Այս ամանորին մենք որոշել էինք փոքրիկ անակնկալ մատուցել իրենց՝ նվիրելով տաք հագուստ, իսկ ամանորյա ընթրիքի համար տրամադրեցինք քաղցրավենիքներ և մրգեր՝ իրենց տոնն ավելի առանձնահատուկ դարձնելու համար:

Ընդհանուր հավաքված գումար՝ դ 935,220

#5) Սուրբ Ծննդի հինգերորդ օրը

Մեր հովանավորների շնորհիվ...
զաեւգացնող խաղալիքներ նվիրեցինք Հայաստանի տարբեր մարզերի 4 մանկապարտեզներին:

ՁարՄան-ը ստեղծում է հետաքրքիր եւ էկոլոգիապես մաքուր զարգացնող խաղալիքներ երեխաների համար: Խաղալիքները այնպես են մտածված, որ առավելագույնս հետաքրքիր լինեն երեխաների համար եւ նպաստեն իրենց ստեղծագործական հմտությունների զարգացմանը: Մյուս կարեւոր փաստը՝ՁարՄան-ի խաղալիքները պատրաստվում են Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց կողմից: Տոներին ընդառաջ ՁարՄան-ի թիմը երազում էր իր խաղալիքներով կիսվել տարբեր մարզերում գտնվող մանկապարտեզների հետ: Այս մանկապարտեզները մեծ բյուջե չունեին խաղալիքներ ձեռք բերելու համար, ուստի նրանք սովորաբար ինքնուրույն էին պատրաստում պլաստիկ շշերից և շշերի կափարիչները: Ձեր օգնությամբ մենք կարողացանք այս հրաշալի խաղալիքների փաթեթները ուղարկել Արմավիրի, Արարատի եւ Կոտայքի մարզերում գտնվող շուրջ չորս մանկապարտեզներին: Մյուս տարի մանկապարտեզները սպասում են շուրջ 500 նոր սաններ: Շնորհակալություն մեզ աջակցելու համար:

Ընդհանուր հավաքված գումար՝ դ 1,280,266

#4) Սուրբ Ծննդի չորրորդ օրը

Մեր հովանավորների շնորհիվ...
Բերդ համայնքում այգի կկառուցենք:

Լուսիկ Աղաբաբյանը՝ Հայ Օգնության Ֆոնդի աշխատակիցը, մանկուց յուրահատուկ վերաբերմունք է ունեցել տարեցների հանդեպ: Նա շատ բան է սովորել մեծանալով իր տատիկի և պապիկի հետ, հատկապես միշտ շատ սիրել է տատիկի հետ այգի խնամելը: Երկար տարիներ Լուսիկը երազում էր ստեղծել մի վայր, մի այգի, որտեղ երեխաները և տարեցները

կկարողանան հանդիպել, շփվել, սովորեցնել և սովորել իրարից, միասին զբաղվել արվեստով և այգեգործությամբ: Մենք մեր թիմով շատ էինք սիրել այս գաղափարը: Ընտանեկան ծանր պայմաններ ունեցող երեխաների համար տարեցների ընկերությունը և սերը շատ բան կարող է փոխել իրենց կյանքում: Նույն կերպ, երեխաների կենսունակությունը, խինդն ու եռանդը մեծ ուրախություն կպարգևեն այն տարեցներին ովքեր, ցավոք, չունեն մտերիմներ իրենց կյանքում: Տավուշի Բերդ քաղաքում նման մի հրաշք վայր ստեղծելու համար Լուսիկին ընդամենը պետք էր $700, որ կարողանար գնել մի քանի նստարան եւ ծաղիկների սերմեր: Ձեր շնորհիվ, երազանքը կատարվեց:

Ընդհանուր հավաքված գումար՝ դ 343,700

#3) Սուրբ Ծննդի երրորդ օրը

Մեր հովանավորների շնորհիվ...
Սյունիքում շուտով կկահավորենք երիտասարդական տարածք պատանիների համար:

17 տարեկան Գարիկ Հայրապետյանը ունի դեռահասի ոգևորություն և ավելի հասուն մարդու տեսլական: Շինուհայրը նրա ծննդավայրն է, որը գտնվում է Սյունիքի մարզում՝ ՝ Ադրբեջանի սահմանին է: Գարիկը գիտի, որ Հայաստանի ապագան երիտասարդներն են ե նրա երազանքն է, որ երիտասարդները գյուղը չլքեն: «Անցյալ տարի ես հասկացա, որ մեր գյուղին անհրաժեշտ է մի վայր, որտեղ երիտասարդները կարող են հավաքվել»,- ասաց նա,«գյուղում մեր երիտասարդների համար շփվելու, կապեր հաստատելու և գաղափարներ փոխանակելու հնարավորություն չկա, ուստի որոշեցի դիմել դրամաշնորհի և սկսել ինչ-որ մի կետից»: «Awesome» հիմնադրամի և դպրոցի տնօրենի որոշակի աջակցության շնորհիվ Գարիկը և համայնքի երիասարդները այժմ ունեն սենյակ և որոշ հիմնական իրեր, սակայն երիտասարդական կենտրոնը իրականություն դարձնելու համար անհրաժեշտ էր կահույք և որոշ իրեր, և ձեր շնորհիվ մենք իրականություն դարձրեցինք Գարիկի և Շինուհայրցի երիտասարդների երազանքը: Շնորհակալություն:

Ընդհանուր հավաքված գումար՝ դ 782,350

#2) Սուրբ Ծննդի երկրորդ օրը

Մեր հովանավորների շնորհիվ...
Զարգացնող խաղեր տրամադրեցինք Սևանի «Մանկական վերականգնողական կենտրոնի»-ի երեխաներին:

Լուսինեն Սևանի «Մանկական վերականգնողական կենտրոնի» տնօրենն է, որտեղ հաճախում են հատուկ կարիքներ ունեցող և տնտեսապես անապահով երեխաները: Կենտրոնը, բացի երեխաների հետ վերականգնողական ծրագրից, շատ կարեորում է նաե ծնողների հետ

աշխատանքը, ովքեր իրենց հերթին պետք է շարունակեն ամրապնդել թերապևտների աշխատանքը տանը նույնպես: Սակայն, այդ ամենը դժվար է իրականացնել առանց հատուկ զարգացնող խաղերի, որոնք բավականին թանկ են ծնողների համար: Լուսինեն իր թիմի հետ միասին գտավ հետաքրքիր լուծում: Նրանք ցանկացան հիմնել խաղերի գրադարան, որտեղից ընտանիքները կկարողանան ժամանակավորապես վերցնել խաղերը, որ երեխաների թերապիան չդադարի և ավելի լավ արդյունք տա: Ձեր շնորհիվ մենք կարողացանք այս երազանքը իրականություն դարձնել: Շնորհակալություն:

Ընդհանուր հավաքված գումար՝ դ 973,050

#1) Սուրբ Ծննդի առաջին օրը

Մեր հովանավորների շնորհիվ...
Բարեգործական ճաշարանին նոր գազօջախ նվիրեցինք:

Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքում տարիներ շարունակ գործում է Հայ Օգնության Ֆոնդի Աբգարյան-Մագոյան բարեգործական ճաշարանը, որտեղ շաբաթական 5 օր սննդարար կերակուր են մատուցում միայնակ տարեցներին, հաշմանդամներին, գործազուրկ ու կարիքավոր ընտանիքներին: Ճաշարանի խոհարար Աննա Արշակյանը պատմում էր, որ շատ մեծ սիրով է պատրաստում ճաշարանի 150-170 շահառուների համար: Սակայն խոհանոցի գազօջախը հին էր, լավ չէր աշխատում, երբեմն նաև գազի արտահոսք էր ունենում: Մենք որոշեցինք նրանց համար նոր գազօջախ գնել, որպեսզի նրանք շարունակեն համեղ կերակուրներ պատրաստել ճաշարանի շահառուների համար: Ձեր շնորհիվ մենք կարողացանք ոչ միայն գազօջախ գնել այլ նաեւ նոր սառնարան: Շնորհակալություն:

Ընդհանուր հավաքված գումար՝ դ 1 090 000

Բյուջե

Երազանք	Ինչ	Ընդամենը ՀՀ դրամ
#13	Տանիքի վերանորոգում ու վառարան Գրիգորյան ընտանիքի համար	460,000
#12	Մանկական մահճակալ, 8 վերմակ, 8 ներքնակ եւ 16 սպիտակեղեն Նոյեմզար ընտանիքի համար	614,000
#11	4 մահճակալ և լվացքի մեքենա Մնացականյան ընտանիքի համար	440,000
#10	8 մահճակալ և սառնարան Հայրապետյան ընտանիքի համար	630,000
#9	Նվերներ Արցախցի երեխաների համար	878,500
#8	Նոր տարվա անակնկալ	750,000
#7	Նոր տարվա տոնակատարություն	445,000
#6	Տաք շորեր	935,220
#5	Զարման խաղալիքներ	1,280,266
#4	Սիրո Այգի	343,700
#3	Երիտասարդների կենտրոն	782,350
#2	Խաղալիքներ	973,050
#1	Գազօջախ	1,090,000

Ընդհանուր

Փոխարժեք 1 ԱՄՆ դոլար = 480.17 ՀՀ դրամ

Դ 9,622,086